ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 56

«02» սեպտեմբերի 2019 թվական գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԼԵՆ-ԳԷՍ ԹԱՂԱՄԱՍԻ ԽՃՈՒՂԻ 2 ,ՇԵՆՔ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԹԻՎ 8 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՓԵՆԻԿ ԶՈՀՐԱԲԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՐԿՈՒ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների դրույթով և հաշվի առնելով Արփենիկ Զոհրաբի Սարգսյանի և Գարեգին Վարդգեսի Սարգսյանի 2019 թվականի հուլիսի 30-ի համտեղ դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին **որոշում է**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Վահրամաբերդ բնակավայրի Լ.ԵՆ-ԳԷՍ թաղամասի խճուղի 2, շենք 3 հասցեում գտնվող բնակելի շենքի 109.88 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով, որից բնակելին՝ 106.36 քառակուսի մետր թիվ 8 բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 2620844) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով, անհատույց, նվիրատվության պայմանագրով տրամադրել այդ բնակելի տանը 1991 թվականից փաստացի բնակվող Արփենիկ Զոհրաբի Սարգսյանի 2 (երկու) անձից բաղկացած ընտանիքին:

2.Մարմաշեն համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյանին

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 595-րդ և 596-րդ հոդվածների համաձայն նվիրատուների հետ կնքել գույքի նվիրատվության պայմանագիր, այն ենթարկել նոտարական վավերացման և ապահովել անշարժ գույքի նկատմամբ քաղաքացիների իրավունքների պետական գրանցումը՝ վերջիններիս միջոցներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Չեռնպահ՝*
ՌՈՒՍՏԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	--------	----------	----------
ԱՐՏՅՈՄ ԶԱՔԱՐՅԱՆ՝	---------	----------	----------
ՍԼԱՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝	---------	----------	----------
ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ՝	---------	----------	----------
ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ՝	---------	----------	----------
ԶԱՆԻԲԵԿ ՂԱՖԱՐՅԱՆ՝	---------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

«02» սեպտեմբերի 2019 թվական

գյուղ Մայիսյան